Փուճջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի :

Տարեկան բաժանորդագինն է երկու եւ կես արծաթ Մեճիտ կանխիկ վճարելի, թէ մայրաքաղաքին եւ իւր արուարձանաց եւ թէ գաւառաց համար :

վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կրնդունուի :

Տեղական եւ գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :

Հատը 40 փարայ է, եւ կգտնուի մասնաւորապէս Պահճէ-Գափու չրաճառ. եւ գրավաճառ. Պօղոս եւ ցակոբ աղայից խանութները :

Յանուցման տողը 3 դրուշ է մէկ անգամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար :

Խմբագրութեան վերաբերեալ որ եւ է գիր ուղղելի աո. Տ՚ճօրեճ-Տէր Հ. Ս. Ալատճաճեան ի. Պօլիս Պալըգ-բազար Նաճիյէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE
H. S. ALADJADJIAN
Directeur du journal Armenien Pountch
—16 Nafié-Han . Balouk-Pazar 16—
Constantinople

ՓՈՒՆՋ

Թիւ 1994 — ԵՍԱԲԱԹ — 1886 ՄԱՅԻՍ 17

ԱԶԳԱՅԻՆ

*Խաղաղութեան Լոյս գրեցէ՛ք քիչ մ՚ալ, ցաւելով կըսէր անցեալ օր մեր ողջախոհ բարեկամաց մէկը, դիտել տալով թէ վերջին ժամանակներս այս կործանարար մոլուԹիւնը դարձեալ սկսած է տարածուիլ Հայ երիտասարդաց դասուն մէջ, և թէ բազումք գիչերներն իսկ անքուն կանցունեն՝ այդ մոլուԹեամբ զբաղեալ ծանրապէս : Շատ իրաւունք ունի մեր բարեկամն. արդարև ցաւալի է այդ վիճակն. Հայ երիտասարդաց բազումք արդէն անգործութեան դատապարտուած լինելով թշուառ և արգահատելի կացութեան մէջ կը գտնուին. և ո՛րչափ աւելի կը ծանրանայ այդ կացութիւնն, եԹէ խաղամոլութեան չարաչար աղէտք ալ գալով եղծանեն ապականեն զիրենք, Ոմանք Թերևս օրինակ կառնուն հարուստ դասակարգէ անձեր, որ իրենց տանց և մինչև իսկ շոգենաւուց մէջ սեղանի մը չուրջը նստած կը խաղան քրտինք Թափելով : Բայց պարտ է առաջի աչաց և մտաց ունենալ միշտ Թէ բազում մեծափարթամ անձինք խաղամոլութեամբ չքացընելով իրենց բոլոր հարստութիւնը, կորուսանելով հայրենի ճոխ ժառանգութիւններ, առյապայս գրեթէ մուրացիկ շրջած և Թշուառութեամբ և ցաւով ու հեծութեամբ ի գերեզման իջած են տարաժամ, իրենց տունն ու ընտանիքը լքանելով ի յետին աստիճան չքաւորութեան և իրենց վախճանէն ետքըն ալ յաւիտենական նախատանաց ու անիծից ենԹակայ լինելով : Խաղամոլութեան այս և այլ բազմազան դժոխային չարիքն ո՞չ ապաքէն գրեթէ ամէն օր կը լսուին և կը հրատարակուին : Մեր երիտասարդք չե՞ն կարդար Թէ այս անուն ընչաւէտ իշխանը, կոմսը, դուքսը խաղարանին մէջ տալով իւր մեծագանձ ճոխութիւնը, յանսահատաբար ինքզինքն սպաննած է, կամ ինքզինքը չարաչար վիրաւորելով՝ խայտառակաբար փոխադրուած է ի հիւանդարան հասարակաց : Ա՛փսո՛ս որ այս ամենայն չեն ազդեր տակաւին, և մեր երիտասարդք փոխանակ գործի և աշխատութեան հետամուտ լինելու, փոխանակ պատուաւոր վիճակի և դրից տէր լինելու ջանից ու փափաքանաց, խաղամոլութեան կուտան զիրենք, խաղամոլութենէ կակնկալեն օգուտ և չահ, խաղամոլութենէ՝ որ կապականէ միտքն, հոգին ու մարմինն, և մարդկային գեղեցիկ կազմուած քն եղծանելով յանպիտանութիւն կը դատապարտէ : Ամէն ողջախոհ երիտասարդի պարտ է յորդոր կարդալ այսպիսի կրօտական վիճակի մէջ գտնուողներուն, որ սոսկմամբ խոյս տան կորստեան անդնդոց եղերքէն և զբաղին պատուաւոր գործով ու աշխատութեամբ, իրենց առաջնորդ առնելով սակաւապետութիւնն ու պարզութիւնն՝ որ քաղցրիկ աղբիւրք են քաջողջութեան, զուարթութեան և բարեբաստութեան :

(Թղթակցութիւն փուճջի)

Զմըռնպ . 5 Մայիս 1886 :— Այս քաղաքը լայնածաւալ դաշտ մի է, բերրի և կանանչազարդ . պտղատու ծառոց անտառի մը նմանութիւնն ունի, որուն Քրիստեան հիւսիսային կողմը Սամսունէն մինչ Յունիա լերանց չղթայով մը բաժնուած է, որմէ փշած հիւսիսային քաղցրիկ զեփիւռն սոյն պտղատու ծառոց ծաղկանց վրայէն սահելով, կանաչ Թաւիշ գեղեցիկ սիրուն դաշտը կը զովացնէ . բիւրաւոր սոխակներ և այլ զանազան անուշ Թռչունք իրենց ներդաշնակաւոր դայլայլիկոցիւն հեչտութիւն կընծայեն մարդուս . գետեր և գետակներ իրենց խոխոջանքներովը և հեզիկ ընԹացիք սոյն կենսաւէտ դաշտը աւելի կը գեղեցկացնեն . նա մանաւանդ Մայիս մէկն էր, երբ տեսայ որ Զարշամպայի հորիզոնէն բարձրացող արփին իւր լուսատիւռ ճառագայԹներով այդ ծաղկալից և պտղատու ծառոց գագաԹը կը բռնկցուներ՝ անուշ և կեանք տալով նոցա . այս չնաշխարհիկ վայրերուն մէջ ապրող Հայն անչուշտ երջանիկ պէտք էր ըլլալ, վասն զի շատ հաղուագիւտ է այս տեսակ բնութեան ամէն գեղեցկութիւնն զգեցեալ զուարթագին երկիր մը . բայց զարմանալի է որ երբ Մայիս մէկն իւր վերջին բարեւն տալով կանհետէր, լուսինն իւր Թեւերը տարածեց հեզիկ հեզիկ խոյանալով անհունութեան ծոցէն, աստեղք աւելի քաղցր նայուածք մը ձգել սկսան արարածոց ճակատագիրն դիտող երկնային զուարթնոց հրեշտեայ և աղու աչաց նման . և այս պահուն էր որ գերեզմաններն իսկ պահ մը իրենց տխրութիւնն և սուգն մոռնալով, նոճիներու մշտադալար տերևներու հովանեաց ներքև կը բռնազբօսուէին . այս պահուն էր որ Զարշամպայի Հայն տարօրինակ հանդէս մը կը կատարէր, ոչ սըրտում էր և ոչ այնչափ ուրախ և զուարթ . որչափ որ պէտք էր, պահ մը կը խնդար, և պահ մը աչքերն արտասուօք կը լցուէր :— Քաղաքին պատուաւոր ազգային-ներէն Մեծ. Մինաս էֆէնտի Քէչէեան, Մայիս մէկի գիչերն էր, որ տեղւոյն Փոխ-Առաջնորդ Եր. Տ. Մամբրէ Ծ. վարդապետն Բզնունին հրաւիրած էր իւր տունքաղաքին երևելի ազգայնոց մեծամասնութեամբն . անդ առեն-խօսութիւններ կըլլային մերթ ընդմերթ, երգեցիկ մանկունք քաղցրիկ կերգէին, երկնից փառայեղ զուարթութիւն կը համապատասխաներ իրօք սոյն պատկառելի բազմականաց խօսքերուն և պատկառելի համակրանաց առ միմեանս, բայց զարմանալի ընդհատում մը կը յաջորդէր այս նախանձելի ակումբին մէջ. կարծես մէկէն տըխրութիւն մը կը պատէր, սրտերը կայլայլէին, դէմքերն կայլագունէին, վասն զի Մայիս մէկի երջանկաւէտ և զուարթագին օրուան նման, որ այնչափ շուտ սահեցաւ ու գնաց, պիտի երթայր իրենց Եր. Առաջնորդն՝ վերջին մեծ բարեաւն ըսելով դէպ ի Եւդոկիա ուր կոչուած էր պաշտօնի : — Եր. Տ. Մամբրէ վարդապետ ամբողջ հինգ տարի հովուած էր այս գաւառն . վարժարանի բարեկարգութեան և եկեղեցւոյ պայծառութեան համար երբէք աշխատութիւն խնայած չէր . նոյնպէս քաղաքացւոյն և գիւղացւոյ բարեկեցութեան համար ինչ որ կարող էր ընել, չէր ղլացած . և իւր այս պաշտօնական կոչումն յարդելու համար Մայիս երկուք էր երբ կը բաժնուէր իւր սիրելի հօտէն, Քաղաքիս Հայ ազգայինքն երեք ամիս էր որ Եր. Եկեղեցի և. կած պահուն չրջապատեալ էր բազմաԹիւ ազգայիններէ, և երբ Եկեղեցին իւր բարեմաղթութիւնն աւարտեց, մի աղդու խրատական յորդոր կարդաց ժողովրդեան՝ Ս. Եկեղեցւոյ և դպրատան մեծ հոգատանելու համար, և վերջին օրհնութիւն մ՚ալ տալով երբ կը մեկնէր Ս. Եկեղեցիէն, կանայք պատուհաններու ներքևէ պարկեշտ կերպով կարտասուէին և արք իրենց վերջին համբոյրն հատուցանելով : Մայիս երկուքն տխուր յիշատակ մը թողուց իւր պայծառ բնութեան հակառակ՝ քաղաքիս Հայ ժողովրդեան սրտին մէջ . ուստի վերջին որդիական պարտք մը կատարել փութացին, ձիաւորեալ բազմաԹիւ Ազգայինք երեք ժամու չափ Նորին Երջանկապատուութեան Առաջնորդարանէն մեկնելով դէպ ի Ս. Եկեղեցի և. կած պահուն չրջապատեալ էր բազմաԹիւ ազգայիններէ, և երբ Եկեղեցին իւր բարեմաղթութիւնն աւարտեց, մի աղդու խրատական յորդոր կարդաց ժողովրդեան՝ Ս. Եկեղեցւոյ և դպրատան մեծ հոգատանելու համար, և վերջին օրհնութիւն մ՚ալ տալով երբ կը մեկնէր Ս. Եկեղեցիէն, կանայք պատուհաններու ներքևէ պարկեշտ կերպով կարտասուէին և արք իրենց վերջին համբոյրն հատուցանելով : Մայիս երկուքն տխուր յիշատակ մը թողուց իւր պայծառ բնութեան հակառակ՝ քաղաքիս Հայ ժողովրդեան սրտին մէջ . ուստի վերջին որդիական պարտք մը կատարել փութացին, ձիաւորեալ բազմաթիւ Ազգայինք երեք ժամու չափ Նորին Երջանկապատուութեան Առաջնորդարանէն մեկնելով դէպ ի Ս. Եկեղեցի և. կած պահուն չրջապատեալ էր բազմաթ

— Ես ուզում եմ ձեզ հարցնել, ընկեր Ս. Ա., ինչպե՞ս է ձեր կարծիքով պետք կազմակերպել մեր գյուղատնտեսական արտադրությունը, որպեսզի նա ամենաբարձր արդյունքներ տա։

— Ընկեր Ս. Ա. ժպտաց։ Նա ինձ ասաց, որ ինքը ոչ մի կարծիք չունի այդ մասին, որ ինքը ոչ մի բան չգիտի այդ մասին, որ ինքը ոչ մի բան չի կարող ասել այդ մասին։

— Ընկ. Ս. Ա. Ձեր կարծիքով ինչո՞ւ է այդպես։

— Ընկ. Ս. Ա. ասաց, որ ինքը ոչ մի կարծիք չունի, որովհետև ինքը ոչ մի բան չգիտի

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ (*)

Երէկ, Ուրբաթ, Ազգային Ժողովի նիստերուն, Ներքին Գործոց Նախարար պ. Վահան Փափազեան հետեւեալ հարցումին պատասխանեց. «Ինչպէ՞ս կը բացատրէ Ներքին Գործոց Նախարարութիւնը Ազգային Ժողովի Ընտրութեանց Յանձնաժողովի անդամ պ. Գրիգոր Զոհրապի ձերբակալութիւնը, որ տեղի ունեցաւ Ազգային Ժողովի նիստերէն ետք, եւ

×× Մ՛ուն եղելը– եղանակն չատ տեղեր սխալ ըմբռնուած կամ բոլորովին չգիտցուած լինելով՝ օգտակար է գիտել հետեւեալն։ «Միսն եփելէ յառաջ՝ արիւնը մաքրելու համար ջրոյ մէջ թողուելիք չէ. այդպէս թէպէտ մսին վրայի աղտը կը մաքրուի, բայց հիւթեղ և զօրաւոր մասն ալ լուացման համար գործածուած ջրոյն մէջ կը մնայ։ Բաւական է միայն մսին վրայի աղտերը սրբել կա՛մ խողանակել և կա՛մ պարզապէս լուալ։ Ամենևին սխալ է նաև տան տիկնոջ ձանձրացած ատենները հոտելու հակամիտեալ միսը լուալով թարմացունելն։ Հոտած միսը ջրով եփելու ատեն, նոր հրահրուած վայտեայ ածխոյ քանի մը կտոր դիր մէջը. այդպէս միսն ու ջուրը կը վերստանան իրենց նախկին հոտն ու համն. ածխոյ կտորները կը քաշեն գէշ հոտը։ Չկանոյ համար ալ այսպէս վարուելու է։ Հոտած հոտ ու համ ունեցող ձուկերն՝ երբ վայտեայ ածխոյ հետ եփուին, բոլորովին կը կորսուանին իրենց գէշ հոտը։

×× Գինոբո՜ւյթ։ – Պավիէրայի Ելապըն քաղաքին օթևաններէն միոյն պանդոկապետը նոր գինի առնելով, հին տակառներուն մէջ դտնուած մրուրը մաքրելու համար, բակին մէջ բացօթեայ տեղ մը ղետեղած էր նոր գինին կարասի մէջ։ Յանկարծ երկաթի կառք մը կեցաւ օթևանին առջև. պանդոկապետը ձիերը կառքէն քակելով բակին մէջ թողուց և հիւրին առաջնորդելու համար վեր ելաւ անոր հետ. ձիերը կարասին մօտենալով խմեցին գինւոյն կէսէն աւելին։ Մէկ ժամ վերջը, ձիերն ախոռին մէջ սկսան տապլտիլ և կատաղի չարժուձեր ընել ա՛յնպէս որ ոչ ոք չէր համարձակեր մօտենալ անոնց. պանդոկապետը տեղեկացաւ թէ ձիերը գինին խմելով գինովցած են. ձիոց մին մերձակայ կով մը այնպիսի սաստկութեամբ թնդեց, որ սոխզուեցան մրթմրթել ղալն անմիջապէս։ Ձիոց պատճառած վնասը տուժել տալ ուղուելով հիւրին, սա մերժեց ըսելով թէ ինքը պատուիրած չէր գինի տալ իր ձիոց։ Խնդիրը դատարանի առջև եղած է։

×× Գուլբէյ էլճանին ընծան։ – Անգղիոյ թագուհւոյ դատեր Ծըննդեան 29րդ տարեդարձին առթիւ, Պուլղարիոյ իշխանն՝ որ նոյա տադրն է, գրասեղանի և գրի սպասներէ բաղկացեալ ընծայ մը ղրկած է առ նա որ պատերազմի դաշտէն գտնուած գնտակներէն պատրաստուած է արուեստաւիւք։ Իշխանը Փարիզ ղրկելով կապարները՝ անդ չինել տուած է իր ուղած ձեւով։

×× Անգղիոյ ներքնահայն ժէնթըլմէն նահանգը ղոր ղրկած է վերջերս վախճանեալ Թուլլօխ անուն ժողովրդապետի մը կնոջ, հետաքրքրական է։ – «Թէև ծերացեալ եմ բայց սիրտս կը կեղեքի. ձեր ամուսնոյն մահուան վշտաւիթ լրոյն վրայ կը մտածեմ, նա քանի՛ օն բարի էր, քանի՛ օն խնամատուն էր. այժմ կը մտածեմ թէ ո՛չ ևս պիտի տեսնեմ զինա. ո՛հ, այս բառերը իմ սիրելեացս բաղմոյ համար հեկեկած եմ արդէն։ Եթէ հանդարտիք վրդը լինչ, ներեցէք լինձ այցելել առ ձեղ։ Անգղիոյ թագուհին, Հնդկաստանի կայսրուհին չէ որ ձեր տունը պիտի դայ, այլ պարզ այրի կին մը, որ կուզէ այրի կնոջ մը քով նստիլ և ողբալ ընդ նմա զկորուստեան։

×× Ձինացւոց պոմբը։ – Մօտերս նոր տարի մ՛ալ աւելցաւ այն տասնեակ հազար ամաց վրայ, յորմէ հետէ՝ ըստ չինացւոց աւանդութեան՝ իրենց կայսրութիւնը գոյութիւն ունի. ներկայ տարւոյս Յունուար 23ին իրենց վեչտասանամեայ կայսեր Քուանկ–Իուի գահակալութեան 12երորդ տարեդարձը տօնեցին։ Չինացւոց տոմարը նըման է նախնի Հռովմայեցւոց, Յունացց և Հրեից տոմարին, բայց անոնցմէ չատ աւելի ուղիղ, մի 4000 տարիներէ հետէ միևնոյն դրութեամբ կերթայ։ Չինացիք ժամանակը չորեքներու բաժնած են, որոց իւրաքանչիւրը կը բաղկանայ 60 տարի, 60 ամիս, և 60 օրէ։ Ա.յս իւրաքանչիւր տասրաբաժանմունք առանձին թուահամար և առանձին անուններ ունին. այնպէս որ մեր 1886ն՝ ըստ չինական տոմարի, տարւոց 76դ չորեանին մէջ 23դն է, որ անցած են նոցա այժմեան տոմարին հաստատութենէն ի վեր, որ է Քրիստոսէ 2637 տարի յառաջ։ Չինացիք օրը կէս գիշերէն սկսելով 12 մասանց բաժնած են, բայց վերջերս մուտ գտնելու վրայ է եւրոպական 24 ժամու դրութիւնը, որովհետև չինացիք եւրոպական ժամացոյցերը յօժարութեամբ կը գնեն և կը գործածեն։ Ամիսն եօթնօրեայ 4 շաբաթներով բաժնելու մեր դրութիւնը չունին. նոքա ամսոց օրերը կանոնաւորագոյն այն աստեղագիտական Յուկ նշանին վրայ երևումէն յառաջերթեայ է։ Որովհետև արևը նոյն դիրքին վրայ կը դառնայ Փետրուարի 17ին, հետեւաբար այն օր չինացւոց նոր տարին է։ Ա.յս կերպով անոնց նոր տարւոյն օրը Փետրուար 7ի և Յունուար 8ի մէջտեղ կը պատահի։ Ա.յսպէս, տարեգլուխն և նորա յարակից ամէն տօնական օրերը արեգակնային ժամանակի համեմատ 30 օրերու մէջ կը տարուբերին։ Ա.յս տեսութեամբ, տարւոյն ամէն մասերը կամ եղանակները որ. երկրագործութեան համար նշանակութիւն ունին, ինչպէս են ցանելու, հնձելու և այլ ժամանակը, կորոշուին լուսնոյ ամսէ անկախ՝ ըստ արեգականին որոյ տարւոյ ընթացքը 24 հաւասար մասերու բաժնուած է, իւրաքանչիւրը 12 աստիճաններով։ Լուսնային տարին միայն 354 կամ 355 օրեր ունի, ըստ որում չինացւոց տարեգլուխը արեգակնային տարեհամարի հաշուով (365–366) իւրաքանչիւր տարի 11 օր, կամ երեք տարին՝ ամբողջ ամիս մը եւս կը մընայ։ Ա.յս պակասը կը լրացուցուի երեքտասաներորդ ամսով մը որով նոր տարւոյ օրը իբր 19 օր յառաջ կերթայ՝ արեգակնային տարւոյ համեմատութեամբ։ Չինացւոց 19 տարիներուն 12ը Հասարակ տարի կը կոչուին 12ական ամսով, և 7ը՝ Նահանջ՝ 13ական ամիսներով։ Ուստի ամէն 19 արեգակնային տարիներէ յետոյ, լուսնոյ տեսիլները պիտի կրկնուին միևնոյն ժամանակին. հետևաբար չինացւոց նորա. լուսնոյ նոր տարին կուգայ՝ ամէն 19 տարին անգամ մը, արեգակնային տարւոյն միևնոյն օրը։ Ինչպէս այս տարի չինացւոց տարեգլուխը Յունուար 23ին եկաւ, և 19 տարի յետոյ դարձեալ նոյն օրը պիտի պատահի։ Սովորական տարւոյն մէջ տարեգլուխը գրեթէ 11 օր ետ կը մնայ, իսկ նահանջ տարւոյն մէջ նախորդ նոր տարիէն 19 օր յառաջ կանցնի։ – Չինաստանի մէջ ի վաղուց Օրացոյցի կազմութեան և ուրիշ աստեղագիտական հաշուոց համար մասնաւոր անձինք սահմանուած են։ Բէյքինի մէջ 200 տարիէ ի վեր առանձին ժողով մը Օրացոյցին և էֆէմերին հրատարակման գործով կզբաղի, որոյ մէջ ցուցուած են արևու, լուսնոյ և ուրիշ մոլորակաց ընթացքը և նոյնպէս չինական կայսրութեան գլխաւոր տեղեաց արևուն երևելու և մտնելու ժամանակները։ Նոյն ժողով դարձեալ կը հրատարակէ Վան–Նիէն–Շու (գիրք 10 հազար ամաց) անուն գիրք մը որ կը պարունակէ չինական կայսերաց ժամանակագրական ցուցակն, իրենց հին Օրացոյցին սկզբունքներն, և նոյնպէս ապագայ Օրացոյցին՝ մինչեւ մեր 1921 թուականի հաշիւները։ Ա.յս հաշիւներ 200 տարւոյ չափ ժամանակ ծէզիւիթներու ձեռամբ կը կատարուէին որոց վերջինոյն (Հասթանօ–Բիւրէս–Բէրէյրա, 1839ին) մահուանէ վերջը սոյն ժողովին մէջ միայն չինացի աստղագէտք կը բազմին։ Կերևի թէ չինացիք իրենց հաշուոց մէջ մինչև յարդ ԺԲ դարու աստղագիտական ցուցակներն (Տէլամրէի և Մայէրի) կը գործածէին, և իրենց գուշակութիւնք արեգական և լուսնոյ խաւարմանց, նորալուսնոյ վրայ ամենայն ճշդութեամբ մինչև մէկ քառորդ ժամ ուղիղ են։ – Չինացւոց աստղագիտական ճեմարանը կառուցեալ է ի Բէյքին, ուր կաւանդուին նաև եւրոպական լեզուք և ուրիշ գիտութիւնք։ – Արդ հետաքրքրական է գիտնալ թէ ո՛ր տոմարն ուղիղ է. Չինակա՞նը, թէ՝ Յուլեանը, Եւրոպականը կամ Գրիգորեանն։ – Երկրագնիս աբեւուն բոլորտիքն ըրած ամբողջ շրջանը կը կատարուի 365 օր 5 ժամ, 48 վայրկեան և 47, 8 երկվայրկենի մէջ։ Ժամանակին այս շրջանին մէջ արևը դարնան հաւասարակշռողական կէտէն եղնելով՝ վերստին անդր կը դառնայ։ Ա.յն տարին կը կոչուի Արևադարձական։ Յուլիոս Կեսար՝ հռովմայեցւոց խառնաչփոթ տարեցոյցն ուղղելով՝ տարին 365 օրերէ կազմեց, սակայն այս տարւոյն՝ արևադարձական տարւոյն համեմատութեամբ ունեցած տարբերութիւնը (5 ժամ, 48 վայրկեան և 47. 8 երկվայրկեան) հաւասարեցնելու համար, երեք տարին անգամ մը չորրորդ տարւոյն վրայ օր մը աւելցնել հարկ եղաւ յորմէ յառաջ եկաւ Նահանջ տարի ըսուածը։ Բայց միայն օրուան մը յաւելմամբ բոլորովին չգոցուեցաւ այս կամ այն տարւոյն գոյացած տարբերութիւնն, որովհետև մէկ օրը միայն 24 ժամ կաւելցնէ, իսկ տարբերութիւնն է 5 ժամ, 48 վայրկեան, 47, 8 երկվայրկեան ×4= 23 ժամ 43 վայրկեան և 52 երկվայրկեան։ Յուլեան տոմարի հաշիւք նախ սկսուած են Քրիստոսէ 44 տարի յառաջ որ մինչև ցարդ կը գործածենք։ Արևադարձական և Յուլեան տարիներու տարբերութիւնը տարուէ տարի հաւաքուելով տասնեւօթներորդ դարուն 10 օրուան տարբերութիւն մը կազմեց. կամ ուրիշ կերպով բացատրենք, գարնան գիշերահաւասարն ետ մնացած է (մարտ 9ին փոխանակ 20ին ըլլալու)։ Ա.յս անկանոնութեան առաջքն առնելու համար Գրիգորիոս ԺԳ. Պապը նոր տոմար մը հաստատեց, որոյ համեմատ ամեն չորս դարու մէջ փոխանակ 100 Նահանջ տարիներ հաշուելու միայն 97 կը հաշուին. այս երեք օրեր 400 տարւոց վրայ թեև սխալը բոլորովին չեն ուղղեր, սակայն այնչափ որ Գրիգորեան տոմարը դեռ մի քանի տարիներ կըբնայ գործածուիլ։ Գրիգորիս՝ Յուլեան տոմարին պակասը մէկէն լըրացուց 1582ի մարտ 5 իբր 15 նըկատել հրամայելով։ ԺԶ. երորդ դարուն վերջէն ի վեր մեր այժմեան գործածուած տոմարին և Գրիգորեանին տարբերութիւնը, ինչպէս ծանօթ է, 12 օրերու չանգած է որ մինչև 1900 Թուականը 13 օրուան պիտի հասնի։ Չինական տոմարի հաշիւք թէև մանրամասնութեանց մէջ խառնաչփոթ, միւս տոմարաց վրայ ամենէն ուղիղ են, որովհետև 235 լուսնային ամիսներ ճիշդ 19 արևադարձական տարիներ կը կազմեն։ Ա.յս պղտին այսչափ խոր հմտութեանց վրայ զարմանալու աւելի մ՛ալ կուենանք, երբ կը տեսնեմք որ միևնոյն ժամանակ աշխարհի գիտական եւրոպա դըրեթէ առանց տոմարի կամ օրացոյցի ապրած է։

ԱՆՈՒՇԱԲՈՑԻ ՄԻՆԱՄ ԷՄԻՐԵԱՆ

Ձիերու, կովերու և ձանց հիւանդութիւնները կը դարմանէ և առ ու ծախի առեւն նոյն կենդանեաց առողջ կամ հիւանդոտ լինելն հասկնալ ուզողները կը գոհացընէ, Պէտք է դիմել Պօլիս Պահճէ–Դարու Մէրհամէթեան էֆէնտիի դեղարանը, կամ իւր բնակարանը Իսկիւտար Պաղլարպաչի Ալթա–պէյ փողոց թիւ 24։

ԲԱՌԱՐԱՆ

Օսմանեան լեզու

Աշխատասիրեաց Մ. Հրան էֆէնտի Ալիկեան. հրատարակուեցաւ հինգերորդ տեսրն ալ։

Գինն՝ 60 փարայ։

ԻԹԱ. – Դուռհէ Թէվֆիգուրիէ։ – Թարգմանեաց ի Թերմանեերէնէ Դաբրիէլ Դրասէրեան։ – Հրահանգ գիւղ բարոյավէպ մ՛է, որ կը վաճառի ի գին 5 դրուշ։

Հրատարակեցաւ ե. թիւ (1 մայիս) ձ՛աշակ Ոսկեղէն Դպրութեան ամսօրեայ գրաբառ հանդիսի։

ՀՈՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԵՒ

ԱՂԹԱՄԱՐ ՈՒ ՍԻՍ

Գեր. Տ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան գրած է Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ընդհանրական հայրապետութեան, եւ Աղթամարայ ու Սսոյ Կաթուղիկոսութեանց հաստատութեան, իրաւասութեան եւ պարտուց ու պաշտամանց վրայ, պատմութեամբք՝ արձանագրութեամբք եւ հին ու նոր վաւերական պաշտօնագրովք հաստատեալ զամենայն։ Ընթերցողն լիուլի ծանօթութիւն կստանայ Հայաստանեայց Հայրապետութեան եւ Աղթամարայ ու Սսոյ անցեալ եւ ժամանակակից վիճակաց վրայ։ Անչուշտ եմք, թէ մեծ կարեւորութիւն ու օգտակարութիւն ունի այս հրատարակութիւնը, մանաւանդ ներկայ ժամանակիս մէջ, յորում Սսոյ կաթուղիկոսական խնդիրն կը յուզուի դեռ եւ Պալաճենիայի բարեփոխութեան վրայ կխօսուի։ Գեր. Իզմիրլեան քալ հետազօտած ու խմաստասիրած է զայս ամենայն, եւ լուսաւոր ծանօթութիւններ կընծայէ հետաքննին Հայոց։ Գրքին սկիզբը զըրուած ցանկը աչքէ անցուընողն պիտի տեսնէ, թէ ո՛րչափ նշանաւոր անցքեր նշանակեալ են խնամով, եւ քանի՛ նըշւիրական ու մեծարելի է Հայկակ անհատութեանց միակ մնացորդն եղող Հայրապետութիւնն։ Կարժէ, որ ամեն Հայ ունենայ հատ մը. կարժէ որ ամեն Հայ թանգարանի մէջ գլխաւոր տեղ մը բռնէ այս Գիրքը։

Կգտնուի լրագրոյս Գրասենեակը, Պօլիս Պալըգ–բազար Նաֆիյէ–խան վերի յարկ թիւ 16. Պաղէշ–գաբու Զըրաճեան Պօղոս ազգի խանութը։ Կը բաղկանայ 1300 երեսներէ։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՈՒԿ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի եւ աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, ամեն չզային տկարութեան ուժաթափութեան եւ տխրութեան համար. կը չնչէ եւ անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սրտի եւ երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ եւ գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբը արտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ որովայնի մէջ լցուած կազեր, գլխի ցաւեր կխնայէ, մարսողութիւնը կկատարէ, եւ մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց ըստ կզրգնապատճառ կըլլան, առողջ ու ժեղ եւ բնական դիրքը կզգենու։

ONCUENT HOLLOWEY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւն եւ վերք բուժելու մասին ունեցած պալատականց յատկութեանը չհաւասարիր բընաւ ուրիշ դեղ մը. հին կամնոր թուենաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չէչընէչէ), սրունից եւ սեռանց վերքեր կամ բոլորովին կանցնին եւ կամ կլաւանան. օգտակար է նաեւ հարբուխի, հազի, սրտի բաբախման, մանաւանդ յօգացաւ (եէչ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ եւ զօրաւոր ազդեցութեամբը խոյզ (սըրճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ինչ աստիճան որ ըլլայ կը դիմագրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տփի վրայ, որ կգտնուի ամեն դեղավաճառներու քով, եւ մասնաւորապէս Պաղչէ–գաբու Թաշ–խանի կողմերը Պ. Գասպարեանի դեղարանը, թիւ 7, կը կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն ամէն օր Քրիստոսի ծնընդենէ առաջ 533։

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԻՐ

Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻԶԳԱՆԵԱՆ

Բիզա–փաշա խան թիւ 3